



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

թիվ 11.02.2016  
կայ 11816054

ՈՏ փերթաբլիթ 2016թ.

N 30 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի N1417-Ն  
ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական  
եկամուտների կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 4-ի «Ակցիզային հարկի  
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթների վերաբերյալ  
հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների  
նախարարի 2000 թվականի հոկտեմբերի 20-ի N02/1291 հրամանն ուժը կորցրած  
ճանաչելու մասին» N1417-Ն հրամանով հաստատված հավելվածի N1 ձևի՝ ակցիզային  
հարկի հաշվարկի լրացման կարգում լրացնել 9.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝

«9.1. 2016 թվականի երկրորդ եռամսյակի համար ներկայացվող հաշվարկում ԱՏԳ  
ԱԱ 2208 (բացառությամբ 2208 20, 2208 30, 2208 40), 2402 10 00011, 2402 90 00011,  
2402 10 00012, 2402 90 00012, 2402 20 90011, 2402 20 10011, 2402 90 00013, 2402  
20 90012, 2402 20 10012, 2402 90 00014 ծածկագրերին դասվող ապրանքների մասով  
2016 թվականի ապրիլ ամսվա և մայիս-հունիս ամիսների ընթացքում օտարված  
ապրանքների վերաբերյալ տվյալները (ԱՏԳ ԱԱ ծածկագիր, անվանում, հարկման  
բազայի միավոր, քանակ (ծավալ), սպիրտայնության աստիճան, միավորի  
բացթողնման գին, ակցիզային հարկի դրույքաչափ, ակցիզային հարկի գումար)  
հաշվարկի [5.1]-[5.8]-րդ սյունակներում լրացվում են առանձին տողերով՝ ըստ  
ակցիզային հարկի առանձին դրույքաչափերի:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2016 թվականի ապրիլի 1-ից:

Հայաստանի Հանրապետության  
ֆինանսների նախարար



Գ. Խաչատրյան